



INSTITUTE
OF PUBLIC
POLICY

ՀՔԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

«Հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող 18 տարին լրացած անձանց ինսամքի ծառայությունների ապահովմանը հիմնարկում և այլընտրանքային համայնքային ծառայությունների տրամադրման»

ծրագրի նախագծի

վերաբերյալ

Յունիսի 28-ին տեղի ունեցավ «Հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող 18 տարին լրացած անձանց խնամքի ծառայությունների ապահովագրության և ալլընտրանքային համայնքային ծառայությունների տրամադրման» ծրագրի նախագծի (այսուհետ՝ Ծրագիր) հանրային քննարկումը՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Գեմաֆին Գասպարյանի և շահագրգիռ կողմերի մասնակցությամբ:

Նախագիծը մշակվել է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից:

Քննարկմանը մասնակցում էր նաև Հանրային քաղաքականության ինստիտուտի (ՀԻԻ)՝ հոգեկան առողջության ոլորտի հետազոտող Գոհար Խաչատրյանը:

ՀԻԻ-ն կարծում է, որ Ծրագիրը կարևոր քայլ է հոգեկան առողջության ոլորտի խնդրահարույց իրավիճակին արձագանքելու առումով:

Ծրագրում ոլորտի գլխավոր հիմնախնդիրների հաղթահարման տարբերակ է դիտարկվում համայնքային ծառայությունների ստեղծումը: Առաջարկվում են ալլընտրանքային մոդելներ, սակայն ՀՀ-ում ներդնելու տեսանկյունից առավել նախընտրելի են համարվում պաշտպանված բնակարանները, փոքր տները, ինչպես նաև՝ տնային պայմաններում խնամքի և սպասարկման ծառայությունները:

Նախանշվում է, որ այս մոդելների ներդրմամբ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար կստեղծվեն հնարավորություններ՝ իրացնելու անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքը, որն ուղղակիորեն ամրագրված է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Կոնվենցիայի 19-րդ հոդվածում:

Նախատեսվում է, որ 3-4 տարի հետո կմնա միայն շուրջօրյա խնամքի մեկ հաստատություն (100 տեղանոց)՝ կացարան ու ընտանիք չունեցող և ամենածանր ախտորոշումներով հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող անձանց համար:

ՀԻԻ համոզմամբ, ապահովագրության և ալլընտրանքային ծառայությունների ստեղծումն է, այլև ընդհանուր համայնքային ծառայությունների հասանելիության ապահովումը, իրավունքների իրացման համար անհրաժեշտ երաշխիքների առկայությունը, ինչպես նաև՝ հասարակության մեջ խորը արմատացած

բացասական վերաբերմունքի փոփոխությունը: Բնականաբար, այս ամենը պահանջում է համալիր գործողություններ և բավարար ժամանակ:

Կարծում եմք՝ Ծրագիրը կհաջողի, եթե զուգահեռաբար աշխատանք տարվի հասարակության լայն շերտերի, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց, նրանց ընտանիքի անդամների հետ՝ իրազեկելու նրանց իրավունքների և դրանց իրացման մեխանիզմների մասին: Ծրագրով նախատեսված մոդելները կարող են խթանել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հոգեւոցիալական վերականգնմանը միայն այն դեպքում, երբ դրանք գործեն այնպիսի միջավայրում, որտեղ համայնքի բնակիչների, համայնքային այլ ծառայություններ մատուցող մասնագետների և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց միջև ձևավորված լինի դրական, փոխօգնող վերաբերմունք:

Հայաստանյան հասարակությունում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հանդեպ խտրական վերաբերմունքը խորը արմատներ ունի, հետևաբար, անհրաժեշտ է նախապատրաստական աշխատանքներ տանել համայնքի անդամների հետ՝ մեղմելու առկա բացասական, մերժողական վերաբերմունքը: Այս առումով կարևոր է տեղական ինքնակառավարման մարմինների հետ աշխատանքը, քանի որ համայնքային ծառայությունների ներդրմամբ համայնքը նոր կարգավիճակ և դրանից բխող դերեր պետք է ստանձնի:

ՀԶԻ կարծիքով, որպեսզի Ծրագրով նախանշված մոդելները ծառայեն իրենց նպատակին, անհրաժեշտ է մշակել դրանց գործունեության չափանիշներ, ընթացակարգեր, արդյունավետության գնահատման չափորոշիչներ, որոնց հիմքում էլ պետք է դնել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը: Հարկ է ներդնել հետադարձ կապի մեխանիզմներ, որոնք կլինեն ճկուն, զգայուն, և թույլ կտան վերհանել շահառուների կարծիքը տրամադրվող ծառայությունների վերաբերյալ, ինչն էլ կնպաստի դրանց շարունակական զարգացմանը:

Ծրագրում պարբերաբար շեշտադրվում է համայնքի և ընտանիքի դերի բարձրացումը, ինչպես նաև՝ խնամքի ապահովման անհրաժեշտությունը, ինչն, իհարկե, կարևոր է: Սակայն դրանք ոչ թե վերջնականատակներ պետք է դիտարկել, այլ՝ միջոցներ՝ ստեղծելու հնարավորություններ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց անկախ կյանքի և ինքնաբավության համար:

Այս առումով, Ծրագրում ներկայացված այլընտրանքային մոդելների շարքում կարելի է հավելել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ու շահապաշտպանությանն ուղղված ծառայությունները: Դրանց նպատակն է խորհրդատվություն տրամադրել իրավունքների, առկա ծառայությունների մասին, ինչպես նաև շահապաշտպանական նպատակաուղղված ծրագրեր իրականացնել:

Բացի այդ, ՀԲԻ կարծիքով, կարիք կա ստեղծելու միջանկյալ ծառայություն, որը կապահովի ինստիտուցիոնալ հաստատություններում գտնվող անձանց սահուն և անվնաս տեղափոխությունը՝ այլընտրանքային ծառայություններ տրամադրող կառույցներ: Ծառայության անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ երկար տարիներ լինելով ինստիտուցիոնալ հաստատություններում, մեկուսացվելով հասարակությունից՝ շահառուների մոտ նկատվում է սոցիալական հմտությունների հետընթաց, փոփոխությունների հանդեպ դիմադրություն, ինչի հետ պետք է աշխատի բազմամասնագիտական թիմը:

Համայնքային ծառայությունների տրամադրման հիմքում ընկած 3 սկզբունքների ցանկում առաջարկում ենք հավելել հետևյալ սկզբունքները.

1. Հարգել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքները և արժանապատվությունը,
2. Հարգել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ինքնորոշման իրավունքը,
3. Խթանել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ինքնավարությունը և ինքնաբավությունը,
4. Ապահովել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց մասնակցությունը ծառայությունների տրամադրման բոլոր փուլերում:

Առաջարկում ենք ներկայացնել և մեկնաբանել Ծրագրում կիրառվող հիմնական հասկացությունները, տալ հղումներ՝ տեղեկատվությունն ավելի փաստարկված դարձնելու համար, ինչպես նաև՝ ներկայացնել բոլոր ռիսկերը, որոնք հնարավոր են ապահիստիտուցիոնալացման արդյունքում: Դրանց թվում կարող են լինել ծառայություններ մատուցող կառույցների աշխատակիցների, շահառուների

դիմադրությունը, համայնքի բնակիչների բացասական վերաբերմունքը հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ, համայնքում անհրաժեշտ մասնագիտական կազմի ապահովման դժվարությունը, և այլն: Հարկ է նախանշել բոլոր ռիսկերը և մշակել դրանց կառավարման արդյունավետ մեխանիզմներ:

Չնայած Ծրագիրը դեռևս նախագիծ է, և մի շարք փոփոխություններ են իրականացվելու՝ շահագրգիռ կողմերի առաջարկությունների հիման վրա, սակայն կարող ենք փաստել, որ այն արձանագրում է ապահիստիտուցիոնալացման հրատապությունը և ուղենշում է ոլորտի բարեփոխումների ուղղությունները:



INSTITUTE
OF PUBLIC
POLICY

Հանրապետության 3-րդ նրբ. 8/13

info@ipp.am

+374 60 54 18 47